Հովհաննես Թումանյան

Ուլ (գրաբար)

Ի մէջ խորոյ անտառի էր այծ մի և էր նորա ուլ մի գեղեցիկ:

Այծն աւրն ողջոյն թողու զուլ ի տանն և յարաւտ երթայ. արածէ և յերեկոյի լի ստեամբք

ի տուն դառնայ, զդուռն բախէ, պապաչէ / մկկալ և կոչէ.

Սեա՛ւդ փոքրիկ,

Որդեա՛կ գեղեցիկ,

Զբաւսայ լեռնէ ի լեառն,

Կաթն արարի վասն քոյ,

Բա՛ց զդուռն՝ ի ներքս մտից,

Զանոյշ անոյշ ստինս իմ տաց քեզ.

Սեա՛ւդ փոքրիկ,

Որդեա՛կ գեղեցիկ:

Ուլն նոյնհետայն ի վեր թռչի և զդուռն բանայ: Մայրն զստինսիւր տայ նմա և վերստին ի յարաւտ երթայ:

Զայս ամենայն գայլ մի ի ծածուկ տեսանէ և ի միում երեկոյի յառաջ քան զայծն գայ, զդուռն զարկանէ և թանձու ձայնիւ իւրով կոչէ.

Սեա՛ւդ փոքրիկ,

Որդեա՛կ գեղեցիկ,

Զբաւսայ լեռնէ ի լեառն,

Կաթն արարի վասն քոյ,

Բա՛ց զդուռն՝ ի ներքս մտից,

Զանոյշ անոյշ ստինս իմ տաց քեզ.

Սեա՛ւդ փոքրիկ,

Որդեա՛կ գեղեցիկ:

Ուլն լսէ, լսէ, պատասխանի տայ և ասէ. այդ ո՞վ իցես. զքեզ ոչ ճանաչեմ: Մայր իմ այդպէս ոչ կոչէ: Ձայն նորա քաղցր է յոյժ և բարակ: Քոյդ՝ սաստիկ, անճոռնի: Զդուռն ոչ բացից… Ե՛րթ… Չկամիմ զքեզ…: և գայլն ի բաց գնացեալ հեռանայ:

Սեա՛ւդ փոքրիկ,

Որդեա՛կ գեղեցիկ,

Զբաւսայ լեռնէ ի լեառն,

Կաթն արարի վասն քոյ,

Բա՛ց զդուռն՝ ի ներքս մտից,

Զանոյշ անոյշ ստինս իմ տաց քեզ.

Սեա՛ւդ փոքրիկ,

Որդեա՜կ գեղեցիկ:

Ուլն զդուռն բանայ, ուտէ ի ստենէ և ցմայրն պատմէ.

Զոր ինչ եղև գիտե՞սդ մայրիկ: Սակաւ ինչ յառաջ քան զքեզ եկն ոք, եզարկ զդուռն և կոչէր.

Սեա՜ւդ փոքրիկ,

Որդեա՜կ գեղեցիկ:

Ասէր. բա՛ցզդուռն, այդստուարձայնթանձր էր նմա: Երկուցեալ պակեայ սաստկապէս և զդուռնոչբացի: Ասացի՝ չկամիմ, ի բա՛ց կաց աստի…

Աղէ՜ ա՜ւն, սեաւդ իմ անոյշ, աղէ՜ ա՜ւն. որչա՜փ բարի եղև, զի չբացեր, ասաց մայրն: Այն գայլն էր. եկն, զի զքեզ կերիցէ: Յորժամ մնսանգամ եկեսցէ՝ նմա մի՛ բացցես: Ասասջի՛ր. ե՛րթ ի բաց, ապա թե ոչ՝ մայր իմ զքեզ սրովք եղջերաւք իւրովք սատակեսցէ չարաչար:

Գրաբարի թարգմանությունը՝ Վարդուհի Բալոյանի